



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՅԱՆՎՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ՎԱՂԻՆԱԿ ՎՐԴ. ՄԵԼՈՅԵԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԵՑԱԲ ՍԱՆ ՖՐԱՆՍԻՍԹՈՅԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՆՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՅ ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻԻ

Ի գիտութիւն մեր բարեպաշտ ժողովուրդին, այսու յանուն Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի ու հառն ժողովին, կը յայտարարենք, որ Սան Ֆրանսիսքոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ նշանակուած Է Հոգեշնորհ Տ. Վաղինակ Վրդ. Մելոյեանը, որ վերջին ամիսներուն ծառայութեան կոչուած էր սոյն եկեղեցւոյ յարկին տակ: Հայր Վաղինակ կը փոխարինէ Արժ. Տ. Աւետիս Բինյ. Թորոսեանը, որ ծխական համայնքին ծառայեց շուրջ եօթը տարի:

Նշանակեալ Հոգեւոր Հովիւին կը մաղթենք յաջողութիւն, ծառայական իր առաքելութեան մէջ, իսկ Սան Ֆրանսիսքոյի մեր ծխական համայնքին կը մաղթենք յաւելեալ ծաղկում:

VERY REV. FR. VAGHINAG MELOIAN APPOINTED PASTOR OF ST. GREGORY CHURCH IN SAN FRANCISCO

On behalf of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and the Religious and Executive Councils of the Western Prelacy, we hereby announce that Very Rev. Fr. Vaghinag Meloian has been appointed pastor of St. Gregory Church in San Francisco.

Fr. Vaghinag has been serving at St. Gregory Church for the past few months alongside Rev. Fr. Avedis Torossian, who served as pastor for the past seven years.

We wish Fr. Vaghinag success in his new position.

Ս. ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ՏՕՆԻՆ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԻՏԻ ՊԱՏԱՐԱԳԷ Ս. ԲԱՌԱՍՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԷՋ

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն, Շաբաթ, Հոկտեմբեր 10-ը Սրբոց Թարգմանչաց տօնն է, որ կը նկատուի մեր ազգային-եկեղեցական մեծագոյն տօներէն մէկը:

Յառաջիկայ Կիրակի, Հոկտեմբեր 11-ին, մշակոյթի ամսուան առիթով, Օրէնճ Բաունթիի Սրբոց Բառասնից Մանկանց Եկեղեցւոյ հոգեւոր հովիւը, հոգաբարձութիւնն ու Արի Կիրակոս Մինասեան Ազգային Վարժարանի տնօրէնութիւնն ու ծնողա-ուսուցչական մարմինը ձեռնարկած են հայ մշակոյթին նուիրուած տօնախմբութիւն մը:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Ս. Պատարագ պիտի մատուցանէ եւ օրուան խորհուրդը ներկայացնող պատգամ մը պիտի փոխանցէ Օրէնճ Բաունթիի Սրբոց Բառասնից Մանկանց Եկեղեցւոյ մէջ:

Համաձայն տարիներու աւանդութեան, Ս. Պատարագի աւարտին, Եկեղեցւոյ կից «Ղազարեան» սրահին մէջ, Առաջնորդ Սրբազան Հայրը բացումը պիտի կատարէ գիրքերու ցուցահանդէս-վաճառքին:

Սրբոց Թարգմանչաց տօնին առիթով, Ուրբաթ, Հոկտեմբեր 9-ի երեկոյեան, Ս. Նահատակաց Եկեղեցւոյ մէջ, երեկոյեան ժամը 7ին, տեղի պիտի ունենայ երեկոյեան ժամերգութիւն եւ նախատօնակ, հանդիսապետութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր եւ մասնակցութեամբ հոգեւորականաց դասուն:

Պիտի երգուին Թարգմանչաց տօնին նուիրուած շարականներ: Արարողութեան աւարտին, Առաջնորդ Սրբազան Հայրը պիտի փոխանցէ իր պատգամը:

PRELATE TO CELEBRATE DIVINE LITURGY AT FORTY MARTYRS CHURCH ON THE FEAST OF THE HOLY TRANSLATORS

Saturday, October 10th, 2009, is the Feast of the Holy Translators. On this occasion, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will celebrate Divine Liturgy and deliver the sermon at Forty Martyrs Church in Orange County.

In observance of the Feast of the Holy Translators as well as Armenian Cultural Month, the Pastor and Board of Trustees of Forty Martyrs Church and the administration and parent-teacher committee of A.G. Minassian School have organized a celebration to take place on that day.

Following Divine Liturgy, the Prelate will preside over the opening of the annual book fair to take place at "Ghazarian" Hall.

On Friday, October 9th, the Prelate will preside over eve of the Feast services at Holy Martyrs Church in Encino, and will deliver his message on this occasion. The service begins at 7:00 p.m.

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԼԱՍ ՎԵԿԱՍԻ ԾԽԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԵԱՆ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԹԻ

Կիրակի, 27 Սեպտեմբերին, արժանաւորապէս նշուեցաւ Նեւատայի Լաս Վեկաս քաղաքին մէջ հաստատուած մեր ծխական համայնքի վերակազմութեան երրորդ տարեդարձը:



Այս առիթով, Թեմիս Բարեջան Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Ս. Եւ անմահ պատարագ մատոյց Լուտերական Եկեղեցւոյ մէջ, եւ իր պատգամը փոխանցեց շրջանի հաւատացեալ ժողովուրդին: Եկեղեցւոյ մուտքին, Հ.Ս.Ը.Ս.ի Լաս Վեկասի

«Արցախ» Մասնաճիւղի սկաւուտները դիմաւորեցին Առաջնորդ Սրբազան Հայրը: Սրբազանը օրհնեց զանոնք եւ անոնց աղօթքներ բաժնեց:

Սրբազան Հօր կ'ընկերանար եւ սուրբ խորանին կը սպասարկէր Զրիստոնեական Դաստիարակութեան Գրասենեակի վարիչներէն Հոգշ. Տ. Պարթեւ Կրդ. Կիլիկեան: Արարողութեանց մասնակցեցաւ Բարեջնորհ Չօհրապ Սրկ. Եարալեան: Ս. Պատարագին ներկայ էին վերապատուելի Սեմ Ակիլեան, ինչպէս նաեւ Ազգ. Վարչութեան անդամներէն Տեարք Վահէ Յովակիմեան եւ Վահրիճ Փիլաւճեան:

Առաջնորդ Սրբազանը շնորհաւորեց Լաս Վեկասի եկեղեցական համայնքի վերակազմութեան երրորդ տարեդարձը եւ բարձր գնահատեց ծխական յանձնախումբին, տիկնանց միութեան, դպիրներուն եւ յարակից միութիւններու եկեղեցանուէր ճիգերը եւ ազգանուէր աշխատանքները, որոնք կը ծառայեն գաղութիս ծաղկման ու վերելքին:

Հայ Եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն, այդ օրը Վարագայ Ս. Խաչի տօնն էր:

Սրբազան Հայրը նախ այս տօնին պատմականը կատարեց, ապա, բացատրեց Զրիստոսի Ս. Խաչին իմաստն ու զօրութիւնը, աւարտին կոչ ուղղելով, որ մեր աչքերը Խաչին ու Խաչեալին յարենք: Խաչին նայինք մաքուր սրտով ու բաց հոգիով, եւ այն ատեն Ս. Խաչը մեր կեանքերը պիտի թարմացնէ ու մեզ Աստուծոյ առաջնորդէ:

Յաւարտ Ս. Եւ անմահ պատարագին, հաւատացեալներ, դպրաց դասի ընկերակցութեամբ, երգեցին «Կիլիկիա» մաղթերգը, ապա ներկաները խմբային յուշանկար մը առին Առաջնորդ Սրբազանին հետ:

Լաս Վեկասի մէջ տեղի ունեցած Ս. Պատարագի նախօրեակին, Շաբաթ, 26 Սեպտեմբերին, կազմակերպութեամբ ծխական յանձնախումբին եւ եկեղեցասեր տիկնանց միութեան, տեղի ունեցաւ եկեղեցւոյ եւ Լաս Վեկասի հայ համայնքին վերակազմակերպման երրորդ տարեդարձի ճաշկերոյթը:

Ողջոյնի եւ բարի գալուստի խօսքեր արտասանեցին Տիկ. Շաքե Աճամեան եւ ծխական յանձնախումբի ատենապետ՝ Տիար Ատրուշան Արմենեան:

Գործադրուեցաւ գեղարուեստական յայտագիր:

Այս առթիւ Սրբազան Հայրը յատուկ գնահատագիրով մը պատուեց գաղութիս եկեղեցական թէ ազգային կեանքէն ներս լայն ներդրում ունեցած եւ Հայ Դատի բազմամեայ ծառայողներէն՝ Տիար Հրայր Տետեանը:

Առաջնորդ Սրբազանը, իր եզրափակիչ խօսքին մէջ, յոյս յայտնեց որ Լաս Վեկասի համայնքը հաւատքով, միասնական ճիգերով եւ սերտ գործակցութեամբ իրականացնէ սեփական եկեղեցի ունենալու երազը:

PRELATE CELEBRATES DIVINE LITURGY IN LAS VEGAS ON THE THIRD ANNIVERSARY OF THE RE-ESTABLISHMENT OF THE PARISH

On the weekend of September 25th, 2009, the third anniversary of the re-establishment of the Las Vegas Parish was ceremoniously observed with a banquet and Divine Liturgy celebrated by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate.



On Sunday, September 27th, the Prelate arrived at the church where he has greeted by scouts from the Homenetmen “Artsakh” Chapter. Accompanying the Prelate and assisting at the altar were Very Rev. Fr. Barthev Gulumian and Deacon Zohrab Yaralian. Among those in attendance were Executive Council members Mr. Vahe Hovaguimian and Mr. Vahrij Pilavjian.

Prior to his sermon the Prelate congratulated the parish community on their anniversary, and commended all those who diligently serve for the growth of the parish.

In his sermon on the Feast of the Holy Cross of Varak, the Prelate first gave a brief historical background of the origin of the Feast then reflected on the implications of the Feast in our lives today. The service concluded with the singing of the Cilician anthem and a group photo.

The annual banquet was held on the evening of Saturday, September 26th, organized by the Parish Council and the Ladies Auxiliary.

During the banquet, long-time community activist Mr. Hriyr Dadaian was honored for his service. On this occasion, the Prelate presented Mr. Dadaian with a letter of blessing and commendation. In addition to the Prelate’s letter of blessing and commendation, Mr. Dadaian had received commendations from state and local officials for his contributions to the Las Vegas community. In

conclusion the Prelate once again congratulated the parish community, expressing hope that they the dream to have their own church will be realized in the near future.

Please visit the news section of our website for the full press release and photos.

ԱՐԵՎԵԼԵԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐՈՒ ԶԱՆԴԻՊՈՒՄ

Երեքշաբթի, 6 Յոկտեմբերին, կ.ե. ժամը 11-ին, Սրբոց Նահատակաց Եկեղեցւոյ մէջ, Էսսիսօ, տեղի պիտի ունենայ Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու՝ Ղրպտի Ուղղափառ, Ասորի Ուղղափառ եւ Զայց. Առաքելական Եկեղեցիներու Արեւմտեան Միացեալ Նահանգներու թեմակալ Առաջնորդներու՝ Գերշ. Տ. Սրապիոն Եպիսկոպոսի, Գերշ. Տ. Եուճին Արք. Զափլանի եւ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի հերթական հանդիպումը, հիւրընկալութեամբ թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի:

WESTERN PRELACY TO HOST MEETING OF THE COUNCIL OF ORIENTAL ORTHODOX BISHOPS

The next meeting of the Council of Oriental Orthodox Bishops is scheduled to take place on Tuesday, October 6th, 2009, at Holy Martyrs Church in Encino.

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, H.E. Archbishop Mor Clemis Eugene Kaplan, and H.G. Bishop Serapion will participate in the meeting along with clergy from each church.

«ԶԱՅԱՍՏԱՆ» ԶԱՄԱՅԿԱԿԱՆ ԶԻՄՆԱԴՐԱՄԻ ԹԵԼԵԹՈՆԻ ՆՇԱՆԱԿԻ ԶՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՁԵՌՆԱՐԿԻՆ

Շաբաթ, 3 Յոկտեմբերի երեկոյեան, «Զայաստան» Զիմնադրամի թելեթոնի նշանակի բացման արարողութիւնը եւ տարեկան ճաշկերոյթը տեղի ունեցաւ, Զիմնադրամի աստենապետ՝ Տէր եւ Տիկին Արա Ակիշեաններուն բնակարանը, Թարզանա:

Յանուն Առաջնորդ Սրբազան Զոր, Արժ. Տ. Արտակ Զինյ. Տեմիրճեան ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին եւ պիտի փոխանցէ Առաջնորդ Սրբազան Զոր օրհնութեան եւ յաջողութեան խօսքը:

Ձեռնարկին պատուոյ հիւրն է Անգլիոյ Լորտերու Պալատի փոխ խօսնակ Պարոնէս Զարուլայն Զոքս:

ARMENIA FUND TELETHON LOGO UNVEILING AND ANNUAL BANQUET

On the evening of Saturday, October 8th, 2009, the unveiling of the Armenia Fund Telethon logo and annual banquet will take place at the residence of Armenia Fund Chair Mr. and Mrs. Ara Aghishian, with guest of honor Baroness Caroline Cox.

Rev. Fr. Ardak Demirjian will attend on and convey the Prelate's blessings.

ՀԱՅԿԱԿԱՆ ՈՍԿՐԱԾՈՒԾԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՔԱՅԼԱՐՇԱԼԸ

Շաբաթ, 3 Յոկտեմբերին, Հայկական Ոսկրածուծի Հիմնադրամի տարեկան 4-րդ քայլարշաւը տեղի ունեցաւ Կլենտէյլի Verdugo Park-ին մէջ:

Յանուն Առաջնորդ Սրբազան Հօր, Արժ. Տ. Վազգէն Թինյ. Աթմաճեան ներկայ պիտի ըլլայ քայլարշաւին եւ պիտի փոխանցէ Առաջնորդ Սրբազան Հօր օրհնութեան եւ քաջալերանքի խօսքը:

ARMENIAN BONE MARROW DONOR REGISTRY WALK OF LIFE

On Saturday, October 3rd, 2009, the 4th annual Armenian Bone Marrow Donor Registry Walk of Life will take place at Verdugo Park in Glendale.

Rev. Fr. Vazken Atmajian will attend and convey the Prelate's blessings.

ԹԵՄԻՍ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՆԴԱՄՆԵՐ ԱՅՅԵԼԵՑԻՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

Ազգային Առաջնորդարանի եկեղեցիներու գրասենեակներու
անձնակազմերու



անդամները Հինգշաբթի, 1
Յոկտեմբերին, նախապէս
ճշդուած ժամադրութեամբ
մը, այցելեցին Ազգային
Առաջնորդարան եւ
ընդունուեցան Թեմիս
բարեխնամ Առաջնորդ
Բարձր. Տ. Մուշեղ Արք.
Մարտիրոսեանի կողմէ:

Անոնք առիթը
ունեցան ծանօթանալու
Ազգային Առաջնորդարանի

բաժանմունքներուն եւ Առաջնորդ Սրբազանին ճաշի հիւրը եղան: Զանդիպումը աւարտեցաւ յիշատակի նկարով մը:

STAFF OF PRELACY CHURCHES VISIT THE PRELACY

On Thursday, October 1st, 2009, staff of Prelacy Churches visited the



Prelacy where they were welcomed by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate.

Upon their arrival, staff members were given a tour of the Prelacy and became acquainted with the headquarters, with one another, and with the Prelacy staff.

They then had a meeting with the Prelate which was followed by a brief service in the Chapel, after which they were hosted to lunch by the Prelate.
